


ՏՆՕՐԵՆ-ՈՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԻԱԳԻՐ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տեղիւն. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ֆրանկ. 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր

ՊԵՏՔ ՄԸ

Պարսկ գրադրման յարաբերութեան
հետեւ խոստովանեմք վերջին տարիներու
այնպիսի ծայրայեղութեան մը հասնան, որ ո՛չ
միայն հայ լրագրութիւնը անտուգաբար
մեռնելու վիճակին հաստ, այլ և իրենց մը-
տաքերու և գրերու անկախութիւնը յարգող
հեղինակները չ'որ գրին գրիչներն : Բանաստեղծ-
ութիւնը արդիւնեցաւ բոլորովին, — ըսն մը
որ, հակառակ մտածներու լեզուն դէմ
սկեպտիկներու և յափշտակներու կողմէ ար-
տայայտուած հակակրօնական, միշտ զգալի
պէտք մը ու կարօտ մը կը լսուէր : Գոնէ՛ ար-
ձակը սուրտ միտք : Տաղը տարի տալ՝ տը-
պագրուած գաղափարներն իսկ այսօր պիտի
չեն յօշոտումներէ, կը ծառայեն, փոփո-
խումներէ որոնք նոր սերունդին գոտախա-
րակութիւնը սեղմելու, կաշկանդելու բնու-
թիւն և նպատակ ունին : Այս պայմաններու
մէջ, կրնաք երեւակայել թէ՛ ո՛չ գրագէտը
գրագէտ մնայ, ո՛չ ուսուցիչը ուսուցիչ :

Այս տխուր վիճակին հակահարուածը ե-
ղաւ՝ մտքի վատտակաւորներուն հեռացումը
վտարի ափերէն, որը կը թափանցէ գործը եր-
թալ շարունակելու համար օտար երկիրներու
հայ գաղութներուն մէջ, որը իր գրական
կամ լրագրական ազատութիւնը չի կապտող
միջավայր մը մտադրելու :

Եթէ ուսուցիչ և օրագրող, գերաբարկա-
յին ճիգերով, սկզբնաւորութիւն մը ըլլին ի-
րենց իտեպիլն իրականացման, զայրոյ կամ
թերթի հիմնելով հոս ու հոն, կան սակայն
չափեր՝ այդ ցրուած խումբին մէջ՝ որոնք կը
մնան ձեռնթափ, — հեղինակները :

Եւրոպական ո՛ր և է կեդրոն. քաղաքի մը
մէջ տպարանի մը գոյութեան պէտքը ամեն
ատենէ աւելի զգալի է հիմակ : Այս տեսակ
հիմնարկութիւն մը առանցք մը պիտի ըլլար
որուն շուրջը պիտի գտնային ազգին մաս-
ւորական ցրուած ուժերը. ազգային ու գրա-
կան գործեր, ժամանակակից պատմութեան
վերաբերող հատորներ, հայրենասիրական
քերթումներ, ընկերային հարցերու ուսում-
նասիրութիւններ, տպագրութիւններ՝ հա-
յաստանի խորերէն բերուած, թարմ ու ըզ-
գայուն գրքով մը գրուած, արդիւնքաւոր ու ա-
րիւնտ էջեր և էջեր կորովի ու սրտապնդող
ամենքն ալ իրենց կարգին «գուրս պիտի գա-

յին» աղաւտ ու մեծ մամուլի մը տակէն :

Միթէ արեւմտեան հոյակապ տպարան մը ե-
րազելը utopie է պարզապէս, դիտենք, այն
միջոցին ուր մեր սրբերը կը մնան դեռ լրագ-
րած ու գաղթականներ կէս-կաշա կէս-անօ-
թի : Բայց եթէ գտնուին մէկ կամ մէկ քանի
հարուստներ որոնք ուշադրութիւն դարձնեն
այս պէտքին միայ, տեսական ու օգտաշատ
գործ մը կատարած պիտի ըլլան որ սերունդ է
սերունդ. անցնելով՝ կը զարգանայ, կը զար-
ձակուի ու իր բարեբար արդիւնքները կը տա-
րածէ ամեն կողմ : Ժողովուրդը իր նիւթական
տկար միջոցներով, անկարող է ստանի ձեռ-
նարկութեան մը : Թերթեր ու թերթիկներ
տպող տպարաններն ալ հազիւ կը բաւեն տես-
բակ մը տեղիւն : Այն ալ մեծ գոտախարկութիւն-
ներով :

Գործը գրաւորութիւն կը կարօտի և դա-
մատէր մը կամ գրամոտէշներու ընկերակ-
ցութիւն մը միայն կրնայ հովանաւորել զայն :

Յուսումնը թէ այս առաջարկին վրայ խոր-
հող գտնէ միակ հայ հարուստ մը պիտի գրու-
նուի, ուշ կամ կանուխ Գրական միջանակ մը,
վարժարան մը կամ հիւանդանոց մը հիմնելն
պակաս արժանիք ու օգուտ չունենար հայ
տպարանի մը հաստատութիւնը եւրոպայի մէջ :

ՔՐՈՆԻԿ

Նախ ձեզի պիտի համառօտ պատմութիւն մը
«Վասնային քահանայ մը հանգանակութեան
եղելով Պարբէշի մէջ 15 հազար ֆրանկոյ ազգիւն
մը կը հանգիստի և խալիպալը մէկ կողմ նետելով
անոր հետ կամուսնանայ :»

Այդ բարբարի Տոն Ժուսինն բրածը ոչ ան-
բնական կը գտնեմ և ոչ ալ զարմանալի : Խորհուրդ
խորին, լայն ոչ անհոստեւելի — քահանայական
լեզուով խօսելու համար :

Ինչ որ գիտ կը կատարեցէ, տպագրութեան ոչ
քահանայի մը պակսին է և ոչ ալ ուստադրութիւն մը
աւելնալը :

Տիպար քահանաները կրնան մալաֆօններուն
պէս՝ այս դարափերջին մէջ փնտռուելիք տպար-
ներ չեն, դիտեմ : Այն ապուշ մալեանդներէն ալ
չեմ որ կոկորդիլներ կը սրտունեն գեղգ համոզելու
համար թէ Հայ եկեղեցին մեծ կորուստ մը կընէ
իր խորհրդաւոր մեծութենէն՝ տեղ-տեղի մը առնել
բաւելով :

Քահանայ մը մօրուք մը աւելի ունենալուն հա-
մար նուազ մարդ չէ, կարծեմ, և գայթակղեցնելու
չափ նշանակութիւն չունի եթէ անոնցմէ մէկը իր
սքեմը «ապօրինի բնութիւնը» կամուսնա-
նայ ազգիւն մը հետ որ 15,000 ֆրանք ունի, ինչ
որ եթէ ոչ կրօնապէս գտնէ մարդկութիւն մեղմացու-
ցիչ պարագայ մը ըլլալու չափ գումար մ'ի :

Ինչ որ գիտ կը զարմանայ և կը զայրացնէ, տպա-
հովանայ ազգիւն բրածն է և չեմ հասկնար թէ
ինչպէս ազգիւն մը կրնայ խառնել մէջ փթացած, մե-
սեղներու մէջ բարացած սրտով, Մաշտոցի, Սաղ-
մոսի Տէր-ողորմեայի այդ մարդը իրեն կեանքին ըն-
կեր ընտրել, երբ անգին, սրտուն պիտեղով, դե-
ռատի, փայլուն երիտասարդներ չեն սրկալիր, մա-
նուանք ի Պարբէշ :

Կըմոնեմ թէ ազգիւն մը իրեն տալուն զինուո-
րութիւն մը երազ է, դերասանի մը համար խենդենայ,
հողի տայ հարուստ սեղանաւորի մը տղուն համար,
խենդութիւններ ընէ կորովի և հաստարագուկ ըմբիշ
մը ձեռք անցունելու նպատակով, տունէն փախչի պա-
տահանին տակ գիշերները մինչեւ առտու երգող
դատարկապարտի մը հետ, մօրը հետ կուտի՝ որով-
հետեւ իրեն չի ներքեր որ գրագէտի մը հետ ամուս-
նանայ, այս ամենը կը հասկնամ. լայն քահա-
նայի մը, կիսանայ, քահանայի մը համար հողի
տայ je n'en reviens pas. տալիս միայն և մի
միայն ներքի պիտի ըլլար Պատրիարքարանի
փողոցը բնակող խեղճ ազգիւններուն համար որոնք
միակ հարկունը եղած է քահանաներու խալիպալը,
վարդապետներուն փէշերը, եպիսկոպոսներու մատնին
և սարկաւազներուն . . . հիւժեղ կերպարանքը որ
այդ ազգիւններու երեւակայութիւնը խանգարած է
տակ. լայն Պարբէշի մէջ ներքի ազգիւն մը որ
հաճոյք զգայ տէրութիւն մը իրեն գաղափար ընելէն, ինչ
յոթեւրձում բարբերու մէջ, Աստուած իմ :

Վարդապետ մը, ça passe encore: Վերջապէս
այդ կուտակները, այդ կամուտը ներքինին, վարդա-
պետը, վանքերու մէջ բանտարկուած, ժուժկալու-
թեան մէջ զօրացած, հետեւ ընկերային ամեն յա-
րաբերութիւններէ, տարաշխարհիկ լայնի մը պէս կը
զրդուէ կանայի սքեղութիւնները և իր բոլորով կը
զինովցունէ տեսակ մը հիւսիսական արարածներ
որոնք կը փնտռեն հեշտանքին անդիլի եզրը և կը
փառաւորուին անփորձ մը գլխի հանած ըլլալուն
համար. երջանիկ կը համարին իրենք գիրքէք կար-
ծելով թէ primeur մըն է որ իրենց կը տրուի եր-
կու պահանջի միջեւ :

Մինչեւ Պարբէշ երթալու հարկ չկայ գտնելու
համար կրնան որ իրենց ամուսնական պակսին տե-
րեւորը կը փնտռեն Գերատապալու անձնաւորու-
թիւններու աշխատակցութեամբ :

Գարավերջիկ մօտան է այս. Պարբէշի որիոր-
զը, որ երկնցիկ մը կը յաջորդէ, իր տէրտէրական
հակումով ազգիւն—գրամախոյզ քահանաներու դա-
մը կատարածէ մեր մէջ որուն գէմ ամենէն շատ բո-
ղոքները տպագրութեան վարդապետները պիտի
ըլլան :

Վասնայի այս կուտա-կրօնական scandaleէն ես
սա երկու բարոյականները կը հանեմ :

1. Հանգանակութեան համար պարտաւոր Տեառն
մերոյ 1897 թուականին գործերուն լուսագրին է :
2. Այսուհետեւ քահանաները մինչեւ հիմայ իրենց
համար գործածուած clichés իրենք պիտի իւրացնեն
և երբ ազգիւն մը նամակ գրելու հարկին մէջ գտնու-
լին և կամ երբ այդ հարկը տեսեղծեն, իրենց նա-
մակները տապէս պիտի վերջացնեն :

«Մատչելով ի համարը քու հեռօքի աղջիկ, կը
մնամ եղի :

C'est épatant!

Նախկին քահանայ

Յ. Ա.

ԲԱՅ ՆԱՄԱԿ
«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒԱ, 1 օգոստոս

Յարգելի խմբագիր,

Հաճեցէք զեկուցանել ձեր աշխատակից պարոն Ե.ին ու Փարոսի մէջ Լ. Մ. սկզբնատառերով հրատարակուած յօդուածները խն եւ:

Եթէ, իր տրամաբանութեամբ, այդ սկզբնատառերը յանդիման զգացողի մը խանոտութիւնը մատնանիշ կընեն, ինչ բաներ ենթադրել տալու է արդեօք յօդուած մը որուն ներքեւ ստորագրութեան տեղ կ'երեւայ միայն «մի ու է» Ե. . . :

Սորկեցնել հաճեցէք իրեն միանգամայն թէ, յօդուածի մը յառաջ բերած փաստերուն դէմ փաստերով միայն կը պատասխանուի ու ոչ երբէք հայտնաբերով և անձնականի ուղղուած նախատինքներով: Թէ որ ձեր պարոն Ե.ը խօսելու ու գրելու եղանակը չի գիտեր՝ իրեն և ձեր թերթին համար աւելի օգտակար է, կարծեմ, որ գոնէ գիտնայ լռել:

Ընդունել հաճեցէք, այս առթիւ, Տէր Խմբագիր Իրանին, անկեղծ յարգանքներս:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Վերջին փօսացոյց մեզ եկած բողոքակցութիւններուն մէջ բաց վարդապետները մը իր թիւն ծայրը մեզ կը ցուցնէ:

—Մօտայի վերաբերեալ լրագիր մը ըզլայու է, կրնեմք իրարմ:

Ինչ յուսահարութիւն, անունը միայն բառական էր զմեզ քունդ հանելու համար, «Le Combat», կիսակապ Le Combat!:

Չէիմք սխալած, այս սեռակ լրագիրներն ալ հիմնական մօտան են:

Թերթը Աթէնք կը հրատարակուի, այս չի զարմացներ, բայց խմբագիրը: Երեւակայեցե՛ք սեանեմ, պարսպ սեղը մի՛ աշխատիք, կարելի չէ որ գտնեմք:

* * *

Ասեմք —ասկէ երկու տարի առաջ— քանակական տարբերութիւնները մը անբողոք Պոլսի իրմով կը կզբաղեցնէր եւ մայրաքաղաքը —հաւասարեցի խօսիս— քան զործ ըրած էր իրեն ալ դեռասի կենցաղասերին կեանքին հետեւի:

Գոնէի, քանիքայի, պոստի մէջ հարսացած մարդու մը զաւակն է այն երեւմանի ցոխակեաց պատանին որ աշտօր իր թղթով վարդապետը՝ բայց պարունակութեամբ կարմիր լրագիրն խմբագիրն է:

Հօրեական ժառանգութիւնը —200,000 Ժրանքէ աւելի գումար մը— Պոլսոյ ամեն բաց պատահաններէն յարստուն կերպով փողոց նետելէն, կեանքի՝ սակով ծախու առնելուցից ամեն հեշտանքները հիմնադրի ցանկում մը վաշելելէն ետք, որ մը Հաւաքաւոր խանին քանիքային կանկեանար մեջտեղէն իր ետին ձգելով զեխ, շուայ, հեշտաստ, անօգուտ, փնայած եւ կորսուած երիտասարդի մը համար:

* * *

Երկու տարի Փարիզ ապրելէ, ժրանքներէն չեզուն մշակելէ, քաղաքական անձնաւորութիւններուն հետ ծանօթանալէ ետք, Միօնիստի շատելուն որդին, Պոլսոյ տանթէլաճի էսնաֆէն Գրիգոր աղային ժառանգ

զորդը՝ Խաչիկ Պիտակեան այս քրքր մը հրատարակել կսկսի Աթէնքի մէջ պաշտպանելու համար ձեռնած ազգերու իրաւունքը:

* * *

Հոգեփոխութիւն մըն է այս պարզապէս atavisme ու խառնուած: Le Combat խմբագրին հայրը ասկէ 40 տարի առաջ կը սեանէր Ե. մօտան քննարկէն է եւ ալ ապրանքով խանութ մը կը բանայ:

Որդին կը նայի որ օրուան մօտան կարմիր գրականութեանն է եւ լրագիր մը կը հաստատէ:

Մեզ կը մնայ հօրը գտած յայտնարիւնը մարդէր նաեւ որդուն:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն յուլիս 26 թուականով կը հեռագրեն Սղանսարսին՝ թուրք ժողովուրդին ենթադրական խռովութիւններուն դէմ ձեռք առնուած միջոցներու մասին. «Իւլէմաներու և միջին դասակարգի պատկանող անձնաւորութիւններու ձեռքաւորութիւններ եղան: Մանրաման հարցաքննութեան մը ետք, ձեռքաւորութեանը՝ ալպանիացիներու հսկողութեամբ՝ Բերայի զօրանոցները տարուեցան: Կ. Պոլսոյ թուրք ժողովուրդին ձեռքին զէնքերը կ'առնուին. այս առթիւ կայսերական Իւրաթէ մը կը հրամայէ իշխանութեանը՝ արագ և մանաւանդ խոհեմ կերպով շարժիլ:

«Այս զէնքնէցութեան խորհուրդը Իզլէթ պէյը տուեր է Սուլթանին, առաջը առնելու համար խռովութեանց որոնք կրնան եղեր ծագիլ հաշտութեան կնքման առթիւ եղած զինուորականներուն(?) պատճառաւ:»

—Նայէ Ֆրայէ Բրէնէի տեղեկութեանց նայելով, Կ. Պոլսոյ գեապանախորհուրդի վերջին նիստերէն մէկուն մէջ, Թէվֆիկ փաշա կառավարիչ որ պատերազմական տուգանքի յատկանալի 4 միլիոն սակիին վրայ աւելցուի նաեւ 400,000 սակիի գումար մը, Եպիփոսի մէջ անհասանելու կրած ֆլաւին իրեն հասուցում: Անգլիոյ և Իտալիոյ գեապանները կընդգրկմանն այս առաջարկին. բայց Պ. Նէլիտօֆ համաձայն կը գտնուի անոր և Ֆրանսայի, Գերմանիոյ ու Աւստրիոյ գեապաններն ալ իրենց ուս պաշտօնակցին կողմը կը յարին: Հետեւաբար, Սըր Ֆիլիպ Բըրրի և Պ. Բանձա փոքրամասնութիւն կը կազմեն:

—Դարձեալ, գեապանախորհուրդին մէջ, Թէվֆիկ փաշա սա իմաստով յայտարարութիւն մը ըրեր է. պատերազմին շարժառիթը կրէական խնդիրը եղած ըլլալով, անոր կարգադրութեանն ետքը միայն պէտք է նկատուղութեան առնուի օտմ բանակին Թեապիլայէն ելլելու հարցը: Գեապանները միաձայնութեամբ հակառակեր են այս պահանջման:

—Ֆրանսայի Գոնգրէքսէվիլ ծովագետայ ամբանոցէն Թանի ուղղուած թղթակցութիւն մը, որ կէս-պաշտօնական զեկոյցի մը հանգամանքն ունի, կը պատմէր թէ Ահմէտ ձէլալէտին փաշա այնտեղ երթալով տեսակցութիւններ ունեցեր է «Թէօն-Թիւրք» կուսակցութեան պարագլուխներուն հետ, և հրաւիրեր է զանոնք Կ. Պոլսի դառնալ, Սուլ-

թանին կողմէ բացորոշ խոստում տալով թէ «որ և է ներդրումն չի պիտի պատճառուի իւրենց և թէ համար չի պիտի պահանջուի իւրենց անցեալ արարքներէն: Թղթակցը մինչեւ իսկ կաւեցունէր թէ այդ երիտասարդներէն շատեր հաւանք են՝ կարգ մը պայմաններով. իսկ անոնց պէտքը՝ Մուրաա պէյ, յայտարարեր է թէ կը յօժարի առանց պայմանի վերադառնալ իր երկիրը, եթէ ուղղակի Սուլթանին կողմէ կոչուի:

Բոսկրէ սոյն թղթակցութիւնն արտատրււ պէլէ ետք՝ կաւեցունէ:

«Բարիդէն յուլիս 29 թուականով հեռագիր մը կը հաղորդէ թէ Մեշլեքէր լրագիրը (յիշեալ կուսակցութեան օրկանը) յայտարարութիւն մը հրատարակելով կը հերքէ Գոնգրէքսէվիլի մէջ Մուրաա պէյի ու Ահմէտ ձէլալէտին փաշայի միջեւ համաձայնութիւն մը գոյացած ըլլալու լուրը և կը յարէ թէ «Թէօն-Թիւրք» կուսակցութեան ծրագիրը նոյնը կը մնայ:»

—Պոլսոյ թերթերը կը ծանուցանեն թէ Պէրուլի կուսակալ Նազըմ փաշան (սոսիկանութեան նախորդ նախարարը) Սուրիոյ կուսակալ անուանուեր է և նախորդ շարժումն ըննական պայտարի համար երեսուցէմ ուղեւորեր է:

—Լոնտոնի թերթերուն մէջ հրատարակուած հեռագիր մը կըսէ թէ Կ. Պոլսոյ գեապանները պահ մը խնդիր ըրեր են իրենց մէջ թէ հարկ էր զինուորական զօրութեամբ արգիլել ձէլալ փաշային կրտսէ եղբոր. բայց (ինչպէս դիւրին է դուշակել)՝ չէր ի վերջոյ որոշեր են չի միջամտել, տեսնելու համար թէ ինչ ընթացք պիտի բռնէ Սուլթանին զինուորական պատուիրակը: Թաքմզին Աթէնքի թրդութակցը դիտել կուտայ այս առթիւ որ տէրութիւնը այս կերպով կրկնեցին այն սխալը զոր անգամ մը գործած էին թոյլ տալով Վասա գնդապետին ցամաք ելլել ի կրտսէ:

* * *

Երկ գիշերուան Մարտիոյ Մարհանդակով առնուած երրորդական թերթերուն մէջ կը կարդանք հետեւեալ հեռագրական լուրերը:

Կ. Պոլսէն կը հեռագրեն Սղանսարսին թէ անցեալ կիրակի Սուլթանը հրամայէր է ձեռքաւորել պաշտօնական չորս սպաներ հարկւրի չափ ուրիշ ձեռքաւորութիւնը եւս կատարուեր են:

—ձէլալ փաշա իմացուցեր է ծովակալներուն թէ ինք յատուկ պաշտօն մը ունի ի կրտսէ:

—Աթէնքէն կը հեռագրեն Սղանսարսին թէ Վ. օ. թ. թ. կատարուելով թոյլ չի տար եղբոր որ ցամաք ելլեն Յաւաքաւոր ապստամբած այն Թեապիլայիները որոնք առանց ընտանիքի կը վերադառնան ի Թեապիլա:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մշակի մէջ կը կարգանք:

«Յուլիսի 2ին Վիլնա քաղաքում վախճանիկ հայագիր գեներալ-լեյտենանտ Գիսկարի Բոզդանիչ Տէր-Աստատուով հանդուցեալ պատկանում է կովկասեան զօրքի փառաւոր վետերանների շարքին և յայտնի է դադարանում կատարած իր քաջագործութիւններով այդ երկրի ապստամբութեան ժա»

մանակ, 1877 թվին Երկար ժամանակ Կովկասում ծառայելուց յետոյ, նա նշանակուի Կիւսկի գնդում, բական շրջանի հեծելազորի հրամանատար, ապա փոխադրուի Վարչական և Վերին Հանգուցեայի տղապանները մտադիր են մարմինը փոխադրել թիւի լին և թաղել վանքի եկեղեցու գաւթում, միւս հայ զորապետների կողքին:

Իշխրէն ցատկի ընդ մը կը հասնի մեզ: Վահէ Մամուրեան, մեծանուն գրագէտին կրտսեր որդին, վերջապէս ամսոյն 20ին վախճանէր է Պուճաի ամառանոցին մէջ:

Վաղամեծիկ երիտասարդը հազիւ 21ամեայ, բարեմասնութիւններով օժտեալ՝ պատուական աղաքայ մը կը խոտանար շնորհիւ այն կրթութեան զոր հայրը տուած էր իրեն և այն զգացումներուն զորս աղեղարդ ձերբունին գիտցած էր ներշնչել իր սիրելի Վահէին:

Մէկ տարւածն մ'ը այս երկրորդ կորուստն է զոր կունենայ «Արեւելեան Մամուլի» անօրէն խմբագիրը: Դեռ Տիկին Մարի Հ. Մամուրեանի կանխահաս մահը չի մոռցուած, ահա Վահէն ալ կը ցաւալը շտապէր ծնողացը գորգորանքին:

Խմբագրութիւնս իր վշտակցութեան հաւատարմ կը ներկայացնէ իր յարգելի պաշտօնակցին:

Ա. Զ. Դ

Ուսուցչուհի մը որ Պոլսոյ կառնուր քաղի մը բարձրագոյն վարժարաններէն միոյն մէջ պատճառեալ է եւ երկու ամսէ ի վեր բալախ կը գտնուի, կը փափաքի հայերէնի դասեր տալ տուներու մէջ այցելութեամբ:

Այն ծնողք որ իրենց զաւակներն օտար վարժարան կը դրկեն եւ որ մայրենի լեզուն անոնց ուսուցանել տալ կուզեն, առիթէն կ'ընեն օգտուիլ:

Դիմել ՓԱՐՈՍի Խմբագրատնոցը:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Օսլէանի Հանրի Իշխանը, որուն անունն շուրջը այնքան աղմուկ յարուցուեցաւ Հապէշատանէն Փիկառօի ուղղած թղթակցութիւններուն պատճառաւ, կիրակի օրը Աղեքսանդրիա հասաւ: Յուլիս 20ին ձիապոլիէն մեկնած էր Քալէսոնիէն շոգենաւով դէպի Բօս-Սայիտ, ուսկից երկաթուղիով Զակադիկ և անկից Աղեքսանդրիա գնաց:

Երկուշաբթի առաւօտ ընդունուեցաւ Բարձր Խորհրդին կողմէ: Տեսակցութիւնը տեւեց կէս ժամ:

Իշխանը, ինչպէս յայտնի է, մենամարտի հրաւերներ ստացած է խաղաղի սպաներու կողմէ որոնք իրենց զինուորական արժանապատուութիւնը վիրաւորուած կը համարին Փիկառօի մէջ անոր հրատարակած քննադատութիւններէն: Իշխանն ընդունած է միայն Ալպէրթօն զօրաւարին հրաւերը, ձիապոլիէն հեռադրելով անոր:

Ձրանաա վերադառնալու՝ իմ վկայներս յորտրերութեան մէջ պիտի դնեմ ձեր վկայներուն հետ:

Ուստի Բարիկ հասնելուն, երիտասարդ Իշխանին առաջին գործը պիտի ըլլայ այդ մենամարտով զբաղիլ: Իր յայտարարութիւններուն նայելով, շատ գոհ մնացեր է կատարած ուղեւորութենէն և Մենելիք թագաւորէն սիրալիր ընդունելութիւն գտեր է:

Հանրի Իշխանին կընկերանայ Պ. Լէօնթիէֆ, որ Մենելիքի կողմէ կառավարիչ կարգուեցաւ Հապէշատանի հաստատակածային նահանգներուն և Ռուսիա կը գառնայ Մենելիքի կողմէ Զարին ընծայները տանելու:

Յառաջիկայ ուրբաթ թէ՛ Հանրի Իշխանը և թէ՛ Պ. Լէօնթիէֆ կը մեկնին Աղեքսանդրիայէն:

Իշխանը, առաջինը Մարտիկա և երկրորդը Օսլէա ուղեւորելու համար:

Իշխանը յայտարարեր է իրեն տեսութեան գաղափարներուն թէ միայն ունի յառաջիկայ աշիւ հապէշատան վերադառնալու Պ. Լէօնթիէֆի օգնական ըլլալ անոր կառավարչութեան պաշտօնին մէջ:

— Բարձր Խորհրդը իր կատարելիքով պիտի պարտաւորուի յետագային:

— Առաջնապահական ժողովը երէկի նիստին մէջ որոշուեցաւ 1897ի ուխտագնացութիւնը վերջացած նկատել: Ուշ մնացած ուխտագնացները 12 օրուան քարանձիւայի պիտի ենթարկուին էլ-թօրի մէջ:

Ռաւապու-Ջուլիմայի և Մովսէսի Աղաբաբին մաքրանոցները շնչուած են:

Հիճաղէ եկող նաւերը աղաւթ մուտք պիտի ունենան:

Սուրիայէն եկած ոչխարները եգիպտոս ներմուծելը միշտ արգիւրուած կը մնայ:

— Էլ-Մուշիրի խմբագիրն Պ. Մարգիսի դատը ամսոյ 7ին պիտի տեսնուի տեղական վճարելի դատարանին առջեւ:

— Կըսուի թէ եգիպտական կառավարութիւնը մտադիր է առաջարկել Եւրոպական տէրութեանց որ եգիպտոսի խառն դատարանաց կազմակերպութիւնը կարգ մը բարեփոխումներ կրէ:

— Հինգշաբթի օրը տեղի պիտի ունենայ Մահմադի վերադարձին հանդէսը որուն ներկայ պիտի գտնուին Մուսթաֆա ֆաշա ֆէհմի և միւս բոլոր նախարարները:

— Արեւելեան երկրորդութիւնը Օգոստոս 1ի վիճակահանութեան տուղին պարգեւը 568134 թիւը շահած է:

— Տարպէ-Ահմադ փոքրի պանդոկներէ մէկին մէջ երէկ տատաւ Ալեքսանդրի մը գիտել գտնուեցաւ:

Դիակին ձեռքը ոտքը կապուած էին և արխիւի յետքեր կը կրէր: Ոստիկանութիւնը բնակութիւն տալով է:

— Աղեքսանդրիայ մէջ երկու տեղացիներ, ամուսինը և կինը, շարունակ կը կուէին... ամուսնացած ըլլալին զրոյցներուն ցուցունելու համար Բոյց ամուսինը տեսնելով որ ամեն օր կուէ ընելը ամօթ էր և կրնար անհանգիստ ընել տանը մէջ ընտելութեամբ, միանգամ ընդ միշտ վերջ տալու համար այս գոյթակալական վիճակին շատ կարճ միջոց մը գտած և զօրծաղրած է... կինը սպաննելով:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Այլ եւս հեռագիրներն ալ անակնկալի մը հաճոյքը չեն պատճառել քաղաքական լուրերու հետեւողներուն համար որոնք ինքնին կը գուշակեն թէ երէկուան ծանուցուածը այսօր պիտի հերքուի ու այսօրուան համաձայնութիւն կոչուածը վաղը խզում պիտի դառնայ: Այսպէս, անոնք որ օգոստոս 1ին կը կարգային Պոլէն հասած հրատարակ հեռագիրները թէ «Դեռ պահներն աւարտեցին հաշտութեան նախնական պայմանները և վայրկեանէ վայրկեան իրատէի մը կը սպասուի՝ պայմանագրին կնքումն արտօնող», տեսակ մը վարանումով ու վերապահումով կուզէին հաւատք ընծայել: Եւ ապագային, երկուշաբթի, 2 օգոստոս, Ռիւդէրի հեռագիր մը իրաւունք կուտար յոռետեսներուն, հաղորդելով թէ «Շաբաթ օրուան գումարման մէջ թէ՛ վիճիկ

«փաշա դեսպաններուն ներկայեց անընդունահան փոփոխումներ որոնք նորանոր դժուարութիւններու դուռ պիտի բանան»:

Միշտ միեւնոյն երգն է որ կերգուի, տարբեր բառերով, յուսահատեցուցիչ միօրինակութեամբ: Բանակցութեանց ձգձգումը և նոր արգելքներու ստեղծումը ո՛չ միայն Թուրքիոյ այլ և Եւրոպայի կողմէ: Եւ դիտեցէ՛ք որ ամեն նոր դժուարութիւն շղթայաւորում մը ունի ուրիշ կարգ մը պարագաներու հետ, որոնք անլուծելի կը դարձունեն զայն: Գիւանագիտական հնարամացութիւնը քիչ անգամ այսօր անկերեւ կերպով ի յայտ եկած էր հասարակ մահկանացուներուն համար: Յունաստանի ելեմուտքին վրայ եւրոպական քոնդուլ մը հաստատելու դերմանական առաջարկը, օրինակի համար, որ օրուան խնդիրն է, շատ յստակ կերպով կը պատկերացնէ այդ շղթայաւորումը: Դուռը կը յայտարարէ որ ինք Թեսալիան կամ անոր մէկ մասը ձգելու համար՝ պէտք է որ պատերազմական տուգանքը ստանայ: Գերմանիա կը պնդէ որ պատերազմական տուգանքը որոշուելու, կարգադրուելու համար՝ պէտք է որ քոնդուլը հաստատուի գերման արժեւորներուն շահերն ապահովող, իսկ Յունաստան, որ չի կրնար հաւանիլ այդ քոնդուլին հաստատման որ իր անկախութիւնը պիտի կապտէ, կընդդիմանայ ու խնդիր կը դառնայ նորէն դէպի իր ակզբնակէտը:

Առաջիկ երէկ իրիկուն և այս առաւօտ հասած հեռագիրները որոնցմէ կերեւայ թէ այդ քոնդուլի առաջարկը ինչ փորձանք եղած է Յունաստանի գլխուն, որ մինչեւ իսկ Եւրոպայի թագաւորը իր գահէն հրաժարելու հարկին մէջ կը գնէ: Այս պատահականութիւնն ալ կա՞ր արգեօք Գերմանիայ հաշտին մէջ:

ԼՈՆՏՈՆ, 2 օգոստոս. — Լորտերու Ժողովին մէջ ըրտ Սալլայի յայտարարեց թէ պատերազմական տուգանքի խնդիրը մեծ դժուարութիւն կը յարուցանէ, թէ Թուրքիա կը պնդէ Թեսալիոյ բանի մը կէտերը ձեռք չի հանելու համար մինչեւ որ տուգանքը չի ստանայ: Խնդիրը տէրութեանց քննութեան ենթարկուած է: Լորտ Սալլայի կը կարծէ թէ Յունաստանի վրայ ելմտական քոնդուլի մը հաստատումը անխուսափելի պիտի դառնայ ո՛ր և է ձեռի մը տակ: Թէ Արեւելի համար դժուար պիտի ըլլայ համաձայնութիւն մը գոյացնել քրիստոնեաներուն և իսլամներուն միջեւ:

ԱԹԷՆԻ, 3 օգոստոս. — Արտաքին գործոց նախարարը յայտարարեց թէ թագաւորը տրաւ մաղրութիւն կը ցուցունէ իր գահէն հրաժարելու, այն պարագային որ երկուստեք քոնդուլի առաջարկն ընդունուի:

Կ. ՊՈԼԻՍ, 3 օգոստոս. — Սուլթանը երբեք մէջ նստային Բանձնաժողով մը կազմել տուաւ իր նախագահութեան տակ, Թուրքիոյ նաւային ազդեցութիւնն արձգտուելու նպատակով:

Կ. ՊՈԼԻՍ, 4 օգոստոս. — Եօթը մարտնադրողիցեալ օսմանեան նաւաւոր մը ճամբայ ելաւ Տարտանէլէն դէպ ի կրկնէ:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳԻՐ

Կուզէ՞ք գետնալ թէ ամբողջ ուշիայի մէջ տարին բանի՞ օրինակ լրագիր կը տպուի: Վիճակագրի մը խօսքին նայելով՝ 12 միլիոն: Իրական գաղափար մը տալու համար այս թիւին առաջ բերելիք ծաւալին վրայ, աւելցունենք որ եթէ կարելի ըլլար այդ բոլոր թերթերը քով քովի դնել, 30,000 բառակուսի քերթէթիւ տեղ պիտի ծածկէին: Գաղով թուղթին ծանրութեան, 781.260 թօնօ կը հաշուի: Եթէ այս թերթեր, — կուեցունէ վիճակագրամոլ մը — միակ մամուլի մը տակ տպուէին, իւրաքանչիւր օրինակը մէկ վայրկեանէն, 333 տարի

պէտք էր անոնց տպագրութիւնն աւարտելու համար :
Դարձեալ՝ ուրիշ հաշիւ մը : Իրարու վրայ զի-
գեցէք այդ 12 միլիար թերթերը և էֆէլի աշտարակ-
կին 266 պատիկ րարձրութեանը պիտի հասնիք :

ԼԵՕՆ ՅՈԼԱՅՈ

Ուսումնականներ որ, ինչպէս յայտնի է, ընկե-
րային հաստատութիւն կերպէ, անցեալները Մոս-
կովայի փողոցներէն մէկուն մէջ կը հանգիպի ոտի-
կանի մը որ տմարդութեամբ կը վարուէր զինովի
մը հետ :

— Կարողա՞ գիտե՞ս, կը հարցնէ թօլովօ ոտի-
կանին :

— Այո՛, կը պատասխանէ միւսը :

— Աւետարան կարդացե՞ր ես :

— Անշուշտ :

— Ուրեմն չե՞ս յիշեր թէ Աւետարանը կը պատ-
ուիրէ չարիք չի հասցունել ընկերոջը :

Ոտիկանը պահ մը այս տարօրինակ մարդը զի-
տեղէ ետք, ինքն ալ իր կարգին կը հարցունէ անոր.

— Կարողա՞ գիտե՞ս :

— Այո՛ :

— Կարդացե՞ր ես օրէնքին այն տրամադրութիւ-
նը որ կը վերաբերի հանրային ծովուն վրայ գլու-
նուող գինովներուն :

— Ո՛չ :

— Ուրեմն նախ այդ յօդուածը կարդա՛. ետքէն
կը խօսինք :

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆԿՈՂՆԻ ՄԷՋ

Մարդկային ընկերութենէ վրէժ առնելու համար,
երեսուն տարի շարունակ անկողնոյ մէջ մնալ, ա-
ռանց ոտքը մահճակալէն վար դնելու, նորութիւն
մ'է որ Անգլիայէն կուգայ այս անգամ փոխանակ
Ամերիկայէն գալու :

Անգլիոյ Թէյնմաութի քաղաքին մէջ պատու աղ-
ջիկ մը ահա այդպէսով փարատել ուզած է իր ...
սուրը մնալուն վիշտը :

Երեսունը ութ տարի անընդհատ ամուսին մը
փնտռելէն վերջը և համոզուելով որ գտնելի չունի,
որ մը, կատաղած՝ սենեակը մտաւ, հանեց չըջազգես-
տը, գուլպաները, ձերմակեղենները և նետուեցաւ
անկողնին մէջ, վերմակը զիւրուն քաշեց և ... այդ
վիճակին մէջ 30 տարի ևս ապրեցաւ :

Թէեւ այդ միջոցը բաւական չէր ամուսին մը
գտնելու համար, բայց բժիշկները հաստատեցին թէ
այդ երկարժամանակեայ անկողնակեցութիւնը շատ
նպաստաւոր եղած էր իր առողջութեան. այդ եղա-
կան օրիորդը մեռած ատենը 225 լիպրա կը կշռէր :
Խեղճ աղջիկ, չի կրնալ ամուսնանալուն համար
երեսուն տարի անկողնին մէջ մնալ, ի՞նչ համբե-
րութիւն, ի՞նչ կամք :

Թէեւ իրաւ է որ անկողնոյ մէջ ապրիլն ալ
կէս մը առաջատար մէջ մանել է :

ՄԻՇՐԱՆ ԿԻՐՈՋԵԱՆ

ՀԱՅ ԴԵՐՁԱԿ

ՇԱՐԱՍ ԱՊՏ-ԷԼ-ԱՋԻՋ

Կը պատրաստէ բնիք հաշակով եւ չափաւոր գը-
նեով հագուստներ արանց համար :

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, սամուքի, մոր-
թի եւ ջղային հիւանդութեանց : Կ'ընդունի իրեն
դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիրս Զօքիի
նիւթ դէմք. ամեն օր առաւօտեան ժամը 10 և 12
եւ կէս օրէն վերջ 3 և 5 : Բոլոր վկայեալ աղբա-
սի կը դարմանուին :

ԲԻԻՋԱՆԴ ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արգոյ հա-
տարակութեան թէ Պազար Մուրուրի մէջ
խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ
և ծեծուած խահվէ պիտի ծախուի սովորա-
կան գներով :

Այս խանութին մէջ կան նաեւ զովա-
ցուցիչ ըմպելիներ :

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ
ԱԼԷԲԱՆՏՐ Ժ. ԲԵՍԱՉՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.—
Կանխավճար արժեթուղթերու վրայ.— Կատան-
ձնէ յաճախողներու հաշույն համար գան-
ձումներ ընել եգիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարզեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով :

Ուելի մանրամասն տեղեկութեանց համար զի-
մել Պուլսը փողոց եգիպտական հեռագրատան դէմ
Բէսմաչօղլու դրամատունը :

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօղլաքիյէ, Պուլսիւլեանի օթէլին քովըն-
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները զոհայնելու
եղանակաւ կ'արդուկէ շապիկներ և այլն սո-
վորական գիններով :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԷ ԱՂԵՓՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսթրէս	օմնիպ.	էքսթրէս	օմնիպիս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1 2 3	կարգ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՓՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսթրէս	խառն	օմնիպ.	էքսթրէս	օմնիպիս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	առաւ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	1 2 3	կարգ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ			ԿԱՅԱՐԱՆՔ		
ԱՌԱՅՈՏ			ԱՌԱՅՈՏ		
ԵՐԵԿՈՅ			ԵՐԵԿՈՅ		
Գահիրէ	մեկ.	11 40	Արեւ (քարափ)	մեկ.	9 50
Պէնհա	ժամ.	12 28	» կայարան	»	—
	մեկ.	12 33	»	էքսթրէս	3 30
Ջակարթիկ	ժամ.	1 34	Խամախիա	»	1 20
	մեկ.	1 44	»	»	7 5
Խամախիա	ժամ.	8 54	Ջակարթիկ	ժամ.	3 7
	մեկ.	9 4		մեկ.	3 17
Սիւլ կայարան	ժամ.	—	Պէնհա	ժամ.	4 13
	մեկ.	—		մեկ.	4 17
Տօք (քարափ)	ժամ.	6 55	Գահիրէ	ժամ.	5 5
					10 35